ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, ավազանի անունով Ազատ, ծնվել է 1920 թվականին Սեբաստիա քաղաքում (Թուրքիա), հայ գյուղացու ընտանիքում։

Հինգ տարեկան հասակից որբացել է և մինչև իր պատանեկության տարիները մնացել է դանիացի օրիորդ Յոգոբսոնի «Թռչնոց բույն» որբանոցում, Ջիբեյլում (Լիբանան)։

1935 թվականին ավարտել է Ջիբեյլի դանիական որբանոցի ուսումնական շրջանը և նույն թվականին տեղափոխվել Երուսաղեմի գերմանական որբանոցի արհեստա-ուսումնական կուրսը, որի ընթացքն ավարտել է 1938 թվականին։

1939—1945 թվականներին աշխատել է Երուսաղեմում որպես ուսուցիչ և գրասենյակային ծառայող։

1947 թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք և մինչև 1953 թվականն աշխատել է մի շարք հիմնարկներում, իր մասնագիտության գծով։

1953 թվականին ընդունվել է Հոգևոր ճեմարան, որի դասընթացն ավարտել է 1955 թվականին և ձեռնադրվել սարկավագ, իր կյանքն ընդմիշտ կապելով Մայր Աթոռի հոգևոր ծառայության հետ։

1956 թվականի փետրվարին կուսակրոն քահանա է ձեռնադրվել և նշանակվել Մայր Աթոռի եկեղեցական արվեստի պահարանի վերակացու, պաշտոն, որը վարել է մինչև 1961 թվականը, երբ նշանակվել է Բաքվի թեմի առաջնորդ։

1959 թվականի հոկտեմբերին ստացել է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն։

1962 թվականի հոկտեմբերի 14-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռամբ։

Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը հավատավոր, կարգապահ, համեստ և նվիրված հոգևորական է, որը յուրովսանն ծառայում է Մայր Աթոռին և Հայաստանյայց Եկեղեցուն։